# Ելցինը կապի մեջ է գտնվում Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարության հետ

Մայիսի 7-ին Ռուսաստանի խորհրդարանի նիստի ժամանակ շոշափվեց Հայաստանում եւ Ադրբեջանում ծավալվող իրադարձությունների մասին հարցը: ՌՍՖՍՀ Գերագույն խորհրդի նախագահ Բորիս Ելցինը հաղորդեց, որ նա մշտական կապի մեջ է երկու հանրապետությունների ղեկավարների հետ: Ելցինի խոսքերով, Հայաստանի ղեկավար Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ ունեցած խոսակցություններից անմիջապես հետո նա զանգահարեց ԽՍՀՄ պրեզիդենտին եւ նրա ուշադրությունը հրավիրեց իրավիճակի արտակարգ բարդության եւ բանակի դերի վրա այդ ռեգիոնում: Պրեզիդենտը հավաստիացրեց, ասաց Ելցինը, որ ռեգիոնում կգործեն միայն ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը: